



ՄԱՅՐ ԱԹՈՒՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

31 հունվարի

**ՀՀ Նախագահի թեկնածու
Արմեն Սարգսյանին**



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետական կուսակցության կողմից ՀՀ Նախագահի թեկնածու առաջարկված՝ Միացյալ Թագավորությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Սարգսյանին։

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ ուրախ է ընդունելու Հայոց Եկեղեցու հարազատ զավակին, ում հայրենասեր ու եկեղեցական վեր ոգին իր գործնական դրսևորումներն է ունեցել անցած տարիներին ազգային կյանքում։

Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ պրն Արմեն Սարգսյանը դրական կարծազանքի կատարված առաջարկին՝ պետական կառավարման բնագավառում իր փորձառությունը, հնարավորությունները եւ Սփյուռքի հետ կապերը ծառայեցնելով հայրենի երկրին եւ աշխարհասփյուռ ժողովրդին։

Իր հերթին պրն Արմեն Սարգսյանը, շնորհա-

կալություն հայտնելով հանդիպման առիթով, Վեհափառ Հայրապետին տեղեկացրեց ազգային կառույցների, հասարակության տարբեր հատվածների եւ կուսակցությունների հետ ունեցած հանդիպումների եւ սփյուռքյան համայնքներ ծրագրվելիք այցերի մասին։

Անդրադառնալով ՀՀ չորրորդ Նախագահի դառնալու հանգամանքին եւ առաքելությանը՝ նա ընդգծեց, որ երկրի կառավարման նոր պայմաններում այն տարբերվելու է նախորդներից, նրան հաղորդվելու է նոր իմաստ, եւ ձեւավորվելու է նոր մշակույթ։

Դրական որոշման կայացման դեպքում Արմեն Սարգսյանը կարելուրեց ողջ ազգի հոգեւոր առաջնորդի օրհնությունն ու աջակցությունը։

Հանդիպմանը ներկա էին ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը, Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը, Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը։

Հայրապետին ողջունեցին եւ հանձնախմբի աշխատանքների մասին տեղեկություններ փոխանցեցին Քրիստոնեական միության քահանայապետական խորհրդի Նախագահ Նորին Սրբազնություն կարդինալ Կուրտ Կոխը (Կաթոլիկ Եկեղեցի) եւ Կահիրեի դպտական ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն, Դամիետտի, Բարաի, Զաֆր Էլ Շեյքի միտրոպոլիտ Անբա Բիշոյը (Ղպտի Ուղղափառ Եկեղեցի)։ Վերջիններս նաեւ շնորհակալություն հայտնեցին Նորին Սրբությանը՝ ցուցաբերված ջերմ հյուրընկալության համար։

Այնուհետեւ ներկաներին իր հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ Վեհափառ Հայրապետը ողջունեց հանձնախմբի հերթական ժողովի գումարումը Մայր Աթոռում՝ ընդգծելով, որ Սուրբ Էջմիածինը պատրաստակամ է մշտապես հյուրընկալելու քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին։

Նորին Սրբությունը, անդրադառնալով Արեւելյան Ուղղափառ եւ Կաթոլիկ երկխոսության շրջանակներում տեղի ունեցող հանդիպումներին ու քննարկումներին՝ կարելուրեց նման երկխոսությունները, որոնք վեր են հանում Եկեղեցիների միջեւ ինչպես ընդհանրությունները, այնպես եւ աստվածաբանական եւ եկեղեցաբանական ընկալումներում առկա տարբերությունները, նպաստում Եկեղեցիների միջեւ փոխանաչողությանը, երբայրական հարաբերությունների առավել սերտացմանը եւ ընդհանուր վկայությանը։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց Եկեղեցիների գործակցության եւ ջանքերի մեկտեղ-

ման անհրաժեշտությունը՝ մարդկության առջեւ ծառացած ժամանակակից մարտահրավերների հաղթահարման գործում։ Այս կապակցությամբ Վեհափառ Հայրապետը նաեւ իր մտահոգությունն արտահայտեց աշխարհիկացման գործընթացների հետեւանքով հասարակական կյանքում արձանագրվող հոգեւոր-բարոյական արժեքների նահանջի եւ խեղաթյուրման վերաբերյալ, ինչը հիմնական պատճառ ու շարժառիթ է դառնում այսօր աշխարհում տեղ գտնող ողբերգությունների եւ կորստաբեր երեւույթների։

Մասնավորապես անդրադառնալով Մերձավոր Արեւելքում քրիստոնյաների ծանր վիճակին՝ Նորին Սրբությունը կարելուրեց Եկեղեցիների միասնական հետեւողական ջանքերը՝ ի պաշտպանություն քրիստոնեական համայնքների իրավունքների եւ տարածաշրջանում քրիստոնեական ներկայության՝ աղոթք վերառաքելով նահատակների համար, որոնք ծայրահեղականների եւ ահաբեկչական միավորումների բռնարարքների զոհ են դարձել։

Վերջում, բարի ընթացք մաղթելով հանձնախմբի աշխատանքներին, Ամենայն Հայոց Հայրապետը եղբայրական իր ջերմ ողջույնները փոխանցեց քույր Եկեղեցիների հոգեւոր պետերին, աղոթքն ու օրհնությունը՝ հոգեւոր դասին եւ հավատացյալներին։ Գարեգին Բ Կաթողիկոսը մաղթեց, որ Աստված գործակցի սերն ու գործակցությունը Եկեղեցիների միջեւ եւ արդյունավորի նրանց առաքելությունը՝ ազգերի ու ժողովուրդների խաղաղ գոյակցության համար։

Հանդիպման ավարտվեց հայրապետական Պահպանիչ աղոթքով։

2 փետրվարի

**Արեւելյան Ուղղափառ եւ
Կաթոլիկ երկխոսության հանձնախմբի
անդամներին**



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց հունվարի 30-ից փետրվարի 4-ը Մայր Աթոռում իր հերթական՝ 15-րդ հանդիպումն անցկացնող Արեւելյան Ուղղափառ եւ Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ աստվածաբանական երկխոսության միացյալ հանձնախմբի անդամներին։

Հանդիպմանը հանձնախմբի անդամ, ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց հանձնախմբի համանախագահներին եւ անդամներին։

Ապա հանձնախմբի անունից Ամենայն Հայոց

7 փետրվարի

**ՀՀ-ում Ֆրանսիայի
Նորանշանակ դեսպանին**



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Տոնաթան Լաքոտին։

Նշանակման առիթով շնորհավորելով պրն Տոնաթան Լաքոտին՝ Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց հայ-ֆրանսիական ջերմ հարաբերություններին եւ գործակցությանը՝ դրանց առավել ամրապնդման գործում կարելուրեց նաեւ դեսպանի առաքելությունը։

Գարեգին Բ Կաթողիկոսը գոհունակությամբ խոսեց Ֆրանսիայի հայ համայնքի մասին, ինչպես նաեւ երախտագիտություն հայտնելով Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման հարցում երկրի իշխանությունների հստակ կեցվածքի համար՝ ընդգծելով, որ միայն նմանատիպ մոտեցումը կարող է նպաս-

տել մարդկության դեմ կատարվող ոճրագործությունների կանխարգելմանը։

Վեհափառ Հայրապետը դեսպանին փոխանցեց Մայր Աթոռի պատրաստակամությունը՝ շարունակելու դեսպանատան հետ համագործակցությունը եւ համատեղ իրականացնելու կրթական, մշակութային տարբեր ծեռնարկներ։

Դեսպան Տոնաթան Լաքոտը, հանդիպման կապակցությամբ շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին, Նշեց, որ հայ եւ ֆրանսիացի ժողովուրդների բարեկամությունը շատ ամուր է, եւ Ֆրանսիան շարունակելու է իր գորակցությունը բերել Հայաստանին։ Խոսելով Ֆրանսիայում հայկական համայնքի մասին՝ պրն դեսպանը Նշեց, որ այն անբախտելի մասն է ֆրանսիական հասարակության եւ իր կարելուր ներդրումն ունի Ֆրանսիայի կյանքում։

Շարունակությունը՝ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

7 փետրվարի ԿՎ-ում Ֆրանսիայի դեսպանին

Սկիզբը՝ էջ 1
Չրույցի ընթացքում խոսվեց երկրի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ ձեռնարկվող քայլերի, դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործում Ֆրանսիայի կարեւոր դերակատարության, ինչպես նաեւ 2018 թ. Հայաստանում անցկացվելիք ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովի մասին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն արդյունավոր առաքելություն մաղթեց դեսպանին՝ ի գործացումն հայ-ֆրանսիական կապերի:
Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը եւ միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե ծ. վրդ. Անանյանը:

Շվեյցարիայի Ազգային խորհրդի դասվիրակությանը



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Շվեյցարիայի Համադաշնության Ազգային խորհրդի նախագահ Դոմինիկ դը Բյումանի գլխավորած պատվիրակությանը:

Վեհափառ Հայրապետը, գոհունակությամբ հաստատելով, որ հայ-շվեյցարական հարաբերությունները միշտ բարեկամական են եղել, ողջունեց պատվիրակության՝ երկու երկրների միջեւ համագործակցության առավել զորացմանն ուղղված առաքելությունը: Նորին Սրբությունը գնահատանքով անդրադարձավ այն կարեւոր գորակցությանը, որ Շվեյցարիան բերում է մեր երկրին՝ նպաստելով ինչպես առկա մարտահրավերների հաղթահարմանը, այնպես եւ տարածաշրջանում խաղաղության հաստատմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց, որ Շվեյցարիան, որտեղ գտնվում է Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը (ԵՅԽ), կարեւոր նշանակություն ունի նաեւ միջեկեղեցական կյանքում: Նորին Սրբությունը նշեց, որ Հայոց Եկեղեցին, անդամակցելով ԵՅԽ-ին, մասնակից է Եկումենիկ շարժման այն համագումով, որ կրոնական երկխոսությունը հիմնական դերակատարություն ունի ժողովուրդների միջեւ համերաշխության եւ խաղաղության հաստատման գործում: Վեհափառ Հայրապետը խոսեց քույր Եկեղեցիների հետ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ջերմ կապերի եւ միջկրոնական հարաբերությունների մասին:

Հայոց Հայրապետը մաղթեց, որ Շվեյցարիան, հավատարիմ իր դավանած արժեքներին, միշտ մաա արդարության ջատագով եւ բարձրաձայնելով ճշմարտությունը՝ նպաստի ժողովուրդների միջեւ խաղաղության վերականգնմանը:

Չրույցի ընթացքում Շվեյցարիայի Համադաշ-

նության Ազգային խորհրդի նախագահը հանդիպման առիթով շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին: Պրն Դոմինիկ դը Բյումանը խոսեց մարդկային կյանքում հավատքի կարեւորության մասին՝ տեղեկություններ փոխանցելով Շվեյցարիայի տարբեր կանտոններում Եկեղեցի-պետություն հարաբերությունների վերաբերյալ առկա մոտեցումների մասին:

Ազգային խորհրդի նախագահը Նորին Սրբությանը նաեւ ներկայացրեց Շվեյցարիայի կողմից իրականացվող միջազգային մարդասիրական եւ խաղաղասիրական գործունեությունը: Պրն Դոմինիկ դը Բյումանն անդրադարձավ նաեւ Շվեյցարիա-Հայաստան համագործակցությանը՝ հավաստիացնելով, որ Շվեյցարիան պիտի շարունակի իր գորակցությունը բերել Հայաստանին:

Հանդիպմանը խոսվեց դարաբաղյան հակամարտության եւ դրա խաղաղ կարգավորմանն ուղղված Հայ Եկեղեցու ջանքերի մասին:

Նորին Սրբությունը հյուրերին ներկայացրեց նաեւ Եկեղեցու հոգեւոր եւ սոցիալական առաքելությունը ժողովրդի կյանքում, անդրադարձավ Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերներին:

Վերջում Նորին Սրբությունն արդյունավոր առաքելություն մաղթեց պրն Դոմինիկ դը Բյումանի գլխավորած պատվիրակությանը՝ ի նպաստ երկու երկրների բարեկամության զորացման եւ համագործակցության:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը եւ միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե ծ. վրդ. Անանյանը:

13 փետրվարի Բուլղարիայի Հանրապետության Նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բուլղարիայի Հանրապետության Նախագահ Ռումեն Ռադեւին՝ տիկնոջ՝ Դեսիսլավա Ռադեւայի հետ՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի:

Նորին Սրբությունը, ողջունելով Բուլղարիայի նախագահի այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, գոհունակությամբ հաստատեց, որ այն նոր խթան պիտի դառնա երկու երկրների միջեւ՝ տարբեր ոլորտներում երկկողմ համագործակցության ընդլայնման համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ դեռեւս միջնադարից եկող հայ-բուլղարական պատմական սերտ կապերն ամուր հիմք են միջպետական գործակցության հետագա զարգացման համար: Դրանում Վեհափառ Հայրապետը մեծապես կարեւորեց Բուլղարիայի հայ համայնքի դերակատարությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր գնահատանքը փոխանցեց Բուլղարիայի իշխանություններին՝ հայ համայնքի եւ հայոց թեմի նկատմամբ ցուցաբերվող հոգածու վերաբերմունքի համար, ինչը հնարավորություն է տալիս Բուլղարիայի հողում հաստատված պատմական համայնքին ազատորեն ապրելու հոգեւոր-ազգային կյանքով եւ անքակտելի մասը

րություններին՝ կարելու էլով Եկեղեցու դերակատարությունը ազգային ինքնության ձեւավորման, կրթության ու մշակույթի զարգացման գործում: Խոսելով Բուլղարիայում հայկական համայնքի մասին՝ Նախագահն ընդգծեց, որ այն ուրույն դիմագիծ ունի, ամբողջապես ինտեգրվել է հասարակական կյանքին, եւ որ հայերը գտնվում են մշակույթի եւ այլ ոլորտների առաջատար դիրքերում:

Չրույցի ընթացքում խոսվեց նաեւ Հայաստանյայց Առաքելական եւ Բուլղար Ուղղափառ Եկեղեցիների միջեւ առկա ջերմ հարաբերությունների մասին: Այս կապակցությամբ Հայոց Եկեղեցու Հովվապետը եղբայրական իր ողջուններն ու բարեմաղթանքները փոխանցեց Բուլղար Եկեղեցու պետին՝ Նորին Սրբություն Նեոֆիտ Պատրիարքին: Վեհափառ Հայրապետը նաեւ հավաստիացրեց, որ ինչպես անցյալում, այնպես եւ այսուհետեւ երկու Եկեղեցիներն ամենայն ջանադրությամբ նպաստելու են հայ եւ բուլղար ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Բուլղարիայի Նախագահ Ռումեն Ռադեւին մաղթեց արգասաբեր ծառայություն՝ ի պայծառություն Բուլղարիայի եւ ի բարօրություն նրա բարեսեր ժողովրդի:



կազմվելու բուլղար հասարակության: Նորին Սրբությունը նշեց, որ անձամբ ականատես է եղել այդ իրողությանը՝ Բուլղարիա կատարած հովվապետական այցի ընթացքում:

Իր հերթին Նախագահ Ռադեւը, շնորհակալություն հայտնելով Քարեգին Բ Կաթողիկոսին՝ ընդունելության եւ ջրիստոնեական հնագույն սրբավայր այցելելու հնարավորության համար, անդրադարձավ Հայաստան այցի արդյունքներին եւ իր տպավորություններին: Բուլղարիայի Նախագահը նշեց, որ այցը լավ հեռանկարներ է բացում հայ-բուլղարական հարաբերությունների ընդլայնման համար:

Պրն Ռումեն Ռադեւն անդրադարձավ նաեւ երկու ժողովուրդների պատմության ընդհան-

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը, Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Իսահակ վրդ. Պողոսյանը, Բուլղարիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Սարգսյանը եւ ՀՀ-ում Բուլղարիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մարիա Պավլովա Տոցոբկովա-Կայմակչիեան:

Բուլղարիայի Հանրապետության Նախագահի գլխավորած պատվիրակությունն այցելեց նաեւ Մայր տաճար, ծանոթացավ ավանդատուն-թանգարանում ցուցադրվող Հայ Եկեղեցու սրբություններին եւ եկեղեցական մշակույթի արժեքներին:

Ս. Ղեւոնդյանց քահանայից տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Փետրվարի 6-ին՝ Ս. Ղեւոնդյանց քահանաների տոնի առիթով, հանդիսապետությամբ Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Շայրազույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, միաձնաէջ Մայր տաճարում մատուցվեց ս. Պատարագ:

Տոնի առիթով Մայր Աթոռում էին համախմբվել թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ եւ տարբեր թեմերում ու կառույցներում սպասավորող 236 քահանա:

Պատարագիչն էր ՀՀ զինված ուժերի հոգեւոր առաջնորդության սպասավոր, գնդերեց Սիմեոն քհն. Մովսիսյանը:

Ս. Պատարագի ընթացքում Սիմեոն քահանան խոսեց Ս. Ղեւոնդյանց տոնի խորհրդի ու նշանակության մասին՝ ի մասնավորի նշելով. «Հայրուրամյակներ առաջ մեր սուրբ Նախնիների գործած սխրանքը, ինչպես պատմության ողջ ընթացքում, նույնպես եւ այսօր, նորոգում է մեր ուխտը՝ Տիրոջ Սուրբ Մարմնի՝ Սուրբ Եկեղեցու ծառայության ճանապարհին: Սուրբ Ղեւոնդյանց քաջությունն այսօր նաեւ հրավեր է՝ գորացնելու մեզ ժառանգված փոքր ածուն, մեր հայրենիքը եւ ամրացնելու Աստծո հանդեպ մեր ժողովրդի



նվիրական հավատքը՝ Ղեւոնդյանց ու Վարդանանց օրինակով: Նրանց հոգիներում Տիրոջ հանդեպ բոլորեղված սերն էր, որ եկավ քաջություն հավելելու մեր ողջ ժողովրդի ազատասեր ոգուն, հաղթեց վախը, արիամար-

հեց մահը, մեկ բռունցք դարձրեց ողջ հայությանը, անկարելին դարձրեց հնարավոր, կասեցրեց արյունարբու եւ գորեղ թշնամու ազգակործան նպատակը եւ սերունդներին վերադարձրեց ազատ ու արժանապատիվ ապ-

րելու սրբազան իրավունքը:

Ավարայրի դաշտում մեր սուրբ Նախնայց սրտերում Կենարարի հանդեպ բոլորեղված սերն էր սխրագործում: Նրանցից ամեն մեկի մտքում հնչում եւ կյանքի էր կոչվում աստվածատուր պատվիրանը. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով ու քո ամբողջ մտքով: ... Պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը» (Մատթ. ԻԲ 37-40):

Ահա սա էր սուրբ Ղեւոնդյանց քաջարի հոգեւորականների հերոսական կյանքի եւ Նախատական սերմը եւ ջրիստոնյայի՝ դեպի երկինք տանող ճանապարհի հիմնական ուղենիշը: Միայն իր «հոգում բոլորեղված Կենարարի սիրո հուրը» ունեցող ջրիստոնյան կարող էր չերկնչել մարմինը սպանողներից եւ գիտակցված մարտնչել «մահ իմացյալ՝ անմահություն» տեսիլքով ու հավատքով:

Տեր հայրն ընդգծեց նաեւ, որ սուրբ Ղեւոնդյանց եւ Նրանց արժանավոր հաջորդները՝ Հայոց Եկեղեցու սուրբ հայրապետներն ու եռամեծ վարդապետները, երանելի քահանաներն ու իմաստասեր սարկավազները, մշտապես հոգեւոր ու ազգային շահը վեր են դասել ամեն տեսակի անձնական ցանկություններից եւ հավատքի պահպանման ու ազգային սրբությունների համար վայրկյան իսկ չեն վարանել զոհաբերելու իրենց կյանքը:

Շարունակությունը՝ էջ 6

ԱճԵՆՃԱՅԻՆ ՀԱՅՈՂ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԻՆ

Նվիրված Հայաստանի առաջին Հանրապետության եւ մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ԲՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲԵ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕԲԵ ԱՉԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱԴԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵՇԱՐ ԱԹՈՒՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵԼԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒԴԻԿԷ ԷԶՄԻԱՇԵԻ**

**ԲՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂԱՌՅԵ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԵՇԻ ՑԱՆԵ ԿԵԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ՍՐԲՈՅ ԵՐՈՒՄԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒԴՈՒՄՈՅ,
ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԱՃ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՃ, ՎԱՐԴԱՊԵՏԱՃ, ԲԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱՃ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՄՈՒՄԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ
ԵՒ ՊԱՇՏՈՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՌԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԷԱՆ ՀԱՅՈՑ**

«Եւ այս է յաղթութիւնն՝
որ յաղթէ աշխարհի.
հաւատքն մեր»:
Ա Հոկտ. Ե 4



Գոհություն եւ փառք ենք մատուցում Աստծուն, որ Հայաստանում եւ Արցախում վերականգնված պետականությանը եւ ի սփյուռս աշխարհի ազգային կյանքի ձեռքբերումներով է մեր ժողովուրդը դիմավորում 100-ամյակը Հայաստանի առաջին Հանրապետության եւ մայիսյան հերոսամարտերի: Նշանակալի այս իրադարձությունների մեկդարյա հորեղանի առիթով հայրապետական Մեր խոսքն ենք ուղղում սիրեցյալ մեր ժողովրդին՝ բարձրաձայնելով առաքելական պատգամը. «Եվ այս է հաղթությունը, որ հաղթում է աշխարհին» մեր հավատքը»:

Մեկ դար առաջ մեր ժողովուրդը հայտնվել էր կյանքի եւ մահվան սահմանագծին: Օսմանյան թուրքիան, օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմի խառնաշփոթ իրավիճակից, իրագործում էր ցեղասպանության իր հայաջինջ ծրագիրը: Արեւմտյան Հայաստանը եւ հայկական բնակավայրերը թուրքիայում ավերակվել ու հայաթափվել էին, թուրքական զորքերը ներխուժել էին նաեւ Արեւելյան Հայաստան՝ սպառնալով մեր ժողովրդին:

տում, Ապարանում եւ Ղարաբաղի սայում ճակատ կազմեց թշնամու դեմ: Համախմբվելու խրախույս ու քաջալերություն դարձավ Գեւորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմ՝ ժողովրդի սրտում առաջ բերելով հաղթանակելու ոգի եւ փակելով խուճապի ու նահանջի ուղին: Ետեւում մեր հայրենիքի փոքրիկ մի մասունքն էր, ետեւում քրիստոսահաստատ Սուրբ Էջմիածինն էր՝ մեր հավատքի օրրանն ու ինքնության պատվարը: Հայոց Հայրապետը մերժեց հեռանալ Սուրբ Էջմիածնից եւ քաջաշունչ պատգամով մարտի կոչեց ժողովրդին՝ ասելով. «Ես միշտ ել հավատացել եմ իմ ժողովրդի ոգուն: Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնությունները: Ես համոզված եմ նաեւ, որ ազգն իմ հայոց անարգ թշնամուն դեռ չի ասել իր վերջին խոսքը: Եվ խոսքն այդ պիտի լինի հաղթական»:

Մեկ ամբողջություն, մեկ կամք ու հոգի դարձած մեր ժողովուրդը ուղի կանգնեց փրկելու հայրենիքը, իր կյանքը, իր սրբությունները, պաշտպանելու հայրենի հողում ազատ ապրելու իր իրավունքը: Սրբոց Վարդանանց եւ Ղեւոնդյանց օրի-

նակով Ավարայրի ոգին բոցավառվեց մայիսյան մարտերում: Հաղթանակը ձեռք բերվեց արիության ու հերոսության շնորհիվ հայկական փոքրաթիվ զորամիավորումների ու զորահրամանատարների եւ նրանց շարքերը լրացրած հոգեւորականների ու աշխարհագորայինների: Թուրքական զորքերի առաջխաղացումը կանգնեցվեց եւ ետ մղվեց: Ավերումից ու կոտորածից փրկվեց Արեւելյան Հայաստանը, եւ հինգ եւ կես դարերի երկարատեղադարից հետո վերականգնվեց հայկական պետականությունը: Եղեռնահար մեր ժողովուրդը վկայեց վեր հանելու իր գոյությունը, իր հոգու կենսունակությունը եւ ուժը հավատքի՝ նեղությունների, ցավ ու տառապանքի մեջ հաղթանակ կերտելով: Առ Աստված հավատքի, հայրենասիրության ու նվիրումի հերոսական ոգին միավորեց ու պաշտպանեց մեր ժողովրդին, որ գերագույն ճիգով հայոց պետականության հովանու ներքո հայրենիքում ու սփյուռքում բարձրացրեց իր կյանքը եւ քայլեց վերելքի ուղիով:

Այսօր, սիրելի՛ ժողովուրդ հայոց, 100-ամյա հորեղանը հրավեր է մեզ՝ նվիրված մնալու ազգային զարթոնքի մեր իղծերին, հրավեր՝ մեր հայրենի պետականությունը ամուր պահելու եւ հայրենիքով համախմբված մնալու: Նշանակալի այս հորեղանը նաեւ մի նոր հանգրվան է հավատավոր ոգով ու նվիրյալ գործերով շենացնելու, զորացնելու մեր երկիրն ու ազգային կյանքը, շարունակելու հետեւողական ջանքերը՝ հանուն Արցախի հիմնախնդրի կարգավորման, մեր բանակի հզորացման, որպեսզի խաղաղությունը անվտանգ լինի մեր հայրենյաց սահմաններում: 100-ամյա հորեղանը պատգամ է բերում համազգային միասնության, հայրենիք-սփյուռք կապերի արդյունավորման, մեր Եկեղեցու անդաստանում եւս միասնականության վերահաստատման:


Սիրեցյալ՝ հավատավոր ժողովուրդ Մեր, յուրաքանչյուրս մեր ծառայության մեջ, մեր կյանքի ընթացքներում, միշտ առաջնորդվելով քրիստոնեական մեր հավատքով, ազգին ու հայրենիքին զինվորագրության գիտակցությամբ պիտի կարողանանք գերծ մնալ կրոնականներից եւ քայլեց հաղթանակից հաղթանակ: Պետականությունը ազգի կազմակերպման հիմքն է, առաջնության ուղի, իր արժեքներով ապրելու, իր հոգեւոր ներուժը դրսևորելու հենարան, իր ձգտումներն իրագործելու եւ իրավունքները պաշտպանելու պատվար ու ազգի հարատեւության գրավական: Զմոռանալ մեր կրած գոհողություններն ու տառապանքները եւ միմյանց աջակից՝



կառուցենք բարօրությամբ եւ խնդությամբ լեցուն վաղվա մեր օրը: Հիշենք մեր Եկեղեցուն ու հայրենիքին իրենց կյանքը նվիրած մեր հայրերին եւ հավատքի ու հայրենյաց սիրո մեջ ինքներս մեզ գերազանցենք, որպեսզի այսօր նույնպես մեր ազգային եւ հայրենական կյանքի առջեւ ծառացած դժվարություններին ու խնդիրներին տրվող մեր վճիռները եւ մեր երկրի խաղաղությանը սպառնացող վտանգներին տրվող մեր պատասխանները լինեն հաղթական: Անվարան մեր հավատքն ու հայրենյաց սերը թող մեզ առաջնորդեն՝ իրականություն դարձնելու Արարատի փեշերին

դարձը՝ դարձնելով հայրենասիրության ոգու, քաղաքացիական գիտակցության ու պարտքի արթնության, ազգի ու Եկեղեցու միասնականության ուժ ու զորություն, նորոգություն հավատքի եւ քաջալերություն հայրենաշեն ու ազգաշեն գործերի:

Աղոթում ենք, որ Քրիստոս մեր Տերը պահպանի մեր ժողովրդին մաքուր հավատքով եւ օրհնի ազգիս ջանքերը՝ ի սեր մեր նվիրական հայրենիքի զորացման, մեր Սուրբ Եկեղեցու պայծառության եւ մեր բարօր, լուսավոր ու երջանիկ գալիքի: Թող Բարձրալի օրհնության եւ շնորհների ներքո մեր երկիրը եւ ժո-



միասնական մեր հայրենիքի եւ մեր Սուրբ Եկեղեցու ու ազգային զարթոնքի տեսիլները: «Եվ այս է հաղթությունը, որ հաղթում է... մեր հավատքը»:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ համայն հայության նվիրական սրբօրրանից, հայրապետական Մեր պատգամն ենք բերում սիրեցյալ մեր ժողովրդին, մեր Եկեղեցու թեմական, համայնքային մարմիններին, ազգային, գիտական, կրթական, մշակութային կառույցներին՝ գանազան միջոցառումներով տոնախմբելու հորեղանական տարե-

ղովուրդը, աշխարհը համայն ապրեն խաղաղության մեջ՝ այսօր եւ միշտ. ամեն:

Օրհնությամբ՝
**ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ**

**Տուաւ Կոնդակս յ 8-ն
Յունուարի,
յամի Տեառն 2018 եւ ի թուին
հայոց ՌՆԿԷ
ի մայրավանս
Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1024**

Հունվարի 28-ին՝ Բանակի օրվա առիթով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց սուրբ Պատարագ: Պատարագին էր Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան Եպս Լավասարդյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ ԶՈՒ բարձրագույն սպայական կազմի ներկայացուցիչներ, ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության գնդերեցներ ու զինվորներ:

Իր քարոզում Վարդան սրբազանն անդրադարձ կատարեց Հայոց բանակի կազմավորման տոնին: «Այսօր Աստծու կամքով նշում ենք 26 տարի առաջ հայոց ազատատենչ ոգու, ազատ խոսքի, ազատ ապրելու ոգու բռնկումի հիշատակումը՝ Հայոց բանակի հիմնադրության օրը: Տոնախմբում ենք միասին, որովհետեւ Հայոց բանակը կազմվեց մեր այն գավակների կողմից, ովքեր գնացին պաշտպա-

նելու իրենց հոգեւոր եւ նյութական հայրենիքը, ովքեր գնացին իրենց քրիստոնեական սիրանքը, քաջության ոգին դրսևորելու՝ ընդդէմ թշնամու բոլոր տեսակի հարձակումներին...»

Հերոսությունը, սիրելիներ, առանց քաջության ոգու եւ քրիստոնեական սիրանքի անկմաստ է: Այն միայն, եթե բանակի պարագայում վերլուծենք, մարդասպանության եւ չարիքի գործիք է, բայց եթե այն նպատակաւորված է սեփական ընտանիքի, արժեքի ու մշակույթի, սեփական Եկեղեցու, հայի մեր տեսակի պաշտպանության ու պահպանության, ուստի օրինված է քրիստոնեական Եկեղեցու կողմից, օրինված է Հայ Եկեղեցու կողմից, եւ մշտապես մենք՝ ամենքս, պար-

տականություն եւ պարտավորություն ունենք այդ հավիտենական խաղաղության ջանքի ու ճիգի մեջ աղոթելու մեր այսօրվա նյութական եւ հոգեւոր հայրենիքի խաղաղ ու ստեղծագործ ապրելու իրավունքը պաշտպանող յուրաքանչյուր հայորդու համար:

Այսօր մենք տոնախմբում ենք ոչ թե ուրախանալով եւ սին հպարտություն տաժելով, թե մենք վերանկախացյալ հայրենիք ունենք, հզոր բանակ, օր ավուր ամուր իմաստությամբ լցվող եւ հզորացող հրամանատարական ու զինվորական պատասխանատու կազմ, այլ աղոթելով: Այսօր յուրաքանչյուրս պետք է աղոթենք Տիրոջ հետ հաղորդության մեջ լինելու, մեր հայրենիքի պաշտպանու-

թյան գործի առաքելությունն ստանձնած յուրաքանչյուր հայորդու համար», - նշեց սրբազան հայրը:

Ս. Պատարագի ընթացքում միաձնաեջ Մայր տաճարի Ավագ խորանի վրա, հանդիսապետությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Արշակ Եպս Խաչատրյանի, կատարվեց Հանրապետական մաղթանք:

Հոգեւոր դասը եւ արարողությանը ներկա ժողովուրդը աղոթք բարձրացրեցին երկնավոր Տիրոջ՝ հայցելով խաղաղ ու անվտանգ պահել Հայոց աշխարհը եւ ապավեն լինել ու զորացնել Հայոց բանակի արիասիրտ սպաներին ու զինվորներին՝ իրենց նվիրական կոչման մեջ:

Պատարագ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Բանակի օրվա առթիվ

Փետրվարի 8-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին նշեց Ս. Վարդանանց տոնը, որը նաեւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության օրն է:

Այս առիթով, Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ, միաձնաեջ Մայր տաճարում մատուցվեց ս. Պատարագ: Պատարագին էր Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը:

Ս. Պատարագի ընթացքում Մուշեղ սրբազանն անդրադարձավ Ս. Վարդանանց տոնի խորհրդին. «Վարդանանց ճակատամարտը միայն մեկ օր չէր, այլ, սկսելով 451 թ., շարունակվեց եւ հասավ մինչեւ մեր օրերը:



Վարդանանք ոգի են, Վարդանանք ուժ են եւ հիշողություն, բայց այդ ամենից վեր նրանք սրբեր են: Նրանց անուններով ու բարեխոսությամբ այսօր էլ կարողանում ենք կերտել մեր ապագան: Շատերիս հայտնի է, թե ինչ ազդեցություն ունեցան այդ անուններն ու ոգին Սարդարապատում, Ապարանում, Հարաքիլիսալում եւ տարիներ հետո, ինչո՞ւ ոչ, Հայրենական երկրորդ աշխարհամարտում եւ Արցախյան հերոսամարտում: Այնտեղ էլ կային զարեգիններ, գեւորներ, վարդաններ, ուլեր նույն ոգով կանգնեցին՝ առանց նահանջելու, պատրաստակամ՝ իրենց կյանքը զոհելու: Եվ ինչպես Վարդանանք իրենց կյանքի գնով մեզ փոխանցեցին Քրիստոսի հավատքին փարվելու զորությունը, փոխանցեցին հանուն հայրենիքի, հավատքի ու Եկեղեցու կյանքը չխախտելու ոգին, այնպես էլ 1918-ին՝ ճիշտ իսկույն տարի առաջ, այս սուրբ հողի վրա մեր ազգը մեկ անգամ եւս վկայեց, որ իր որդիները զանիվ ու քաջ զավակներն ու հետնորդներն են Վարդանանց»:

Քարոզի վերջում սրբազանը միաբանության եւ ներկա հավատացյալ ողջ ժողովրդի անունից նաեւ շնորհավորեց Վեհափառ Հայրապետին՝

անվանակոչության օրվա կապակցությամբ՝ մաղթելով, որ Աստված կենաց արեւշատություն պարգևի Հայոց Հովվապետին, իրականություն դարձնի նրա բոլոր ծրագրերն ու երազները:

Այնուհետեւ «Էջմիածին ի Յօրե» շարականի երգեցողության ներքո Մայր Աթոռի լուսարարապետ Հովհաննես եպս Հակոբյանը խորան բարձրացրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ նվիրված Հայաստանի առաջին Հանրապետության եւ մայիսյան հերոսամար-

տերի 100-ամյակին: Այն հրապարակեց Մուշեղ եպիսկոպոսը (տե՛ս էջ 3): Այնուհետեւ Իջման ս. Սեդակի առջեւ, Նախագահությամբ Մայր Աթոռի երիցագույն միաբաններից Ոսկան արք. Գալիաքյանի, կատարվեց Հայրապետական մաղանք:

Միասնական աղոթք բարձրացվեց առ Աստված՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսության անսասանության ու պայծառության եւ ս. Թադեոս առաքյալի Աթոռի գահակալ Գարեգին Բ Հայրապետի կենաց արեւշատության ու արգասաբեր հովվապետության համար:



Ս. Վարդանանց տոնին նվիրված հանդիսություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ նաեւ Ս. Վարդանանց տոնին նվիրված հանդիսություն, որին ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ հայաստանյան տարբեր կրթական հաստատությունների սաներ:

Միջոցառումը բացվեց Տերունական աղոթքով, որից հետո հնչեցին ՀՀ եւ ճեմարանի օրհներգերը: Բացման խոսքով հանդես եկավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը, ով գոհունակությամբ արձանագրեց, որ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ ավանդույթ են դարձել Երեւանի պետական համալսարանի ուսանողների եւ ճեմարանի սաների համատեղ ջանքերով Վարդանանց տոնին կազմակերպվող հանդիսությունները:

Անդրադառնալով օրվա խորհրդին՝ հայր սուրբն ի մասնավորի նշեց. «Տոնական այս օրը մեծ պատերազմում ընկած սուրբ Վարդանանք եւ նրա քաջարի զինակիցներին մեր կյանքում վերարժեւորելու հնարավորություն է ընծայում: Հերոսական անցյալն ու պատմությունը մեր մեջ՝ որպես հավելյալ երկրորդ սիրտ, բաբայելու միջոցով մեզ տալիս է հնարավորություն՝ ինքնավստահ ու փորձառու դեմ հանդիման կանգնել մերօրյա բազմադեմ մարտահրավերներին ու գայթակղություններին: Այո՛, գայթակղությունը մեծ էր ուրախալու հայրենիքը, հավատքը, Քրիստոսին ու նվաստացյալ, բայց եւ բարեկեց կյանք ունենալու օտարի անտանելի լծի տակ: Սակայն Վարդանանք ընտրեցին պահել իրենցը, իրենց դիմագիծն ու հայրենիքը: ... Խիզախությունը ոչ թե վախի բացակայությունն է, այլ հաղթանակը դրա

հանդեպ, ինչպես մեզ ծանոթ ապրիլյան այն օրերը, որ ամենքիս ի ցույց դրեցին հայորդյաց ոգին:

Հիրավի, որպես ժառանգներ խնկելի քաջերի, այսօր մեզ մնում է լինել այնքան արի, որ երբեք օտար լորարարի ու ժամանակակցի կեղծ լույսի ներքո չգրավի հայի դարավոր փորձառությամբ եւ իմաստությամբ մեզ ավանդված արժեքների տեղը»:

Վերջում հայր սուրբը ճեմարանի տեսչական, դասախոսական, ուսանողության եւ ներկաների անունից շնորհավորեց Վեհափառ Հայրապետ-

նաչողական, հոգեւոր եւ ռազմա-հայրենասիրական տարբեր ծրագրեր:

Այնուհետեւ Վարդանանց սխրանքի մասին բանախոսություն կարդաց Երեւանի պետական համալսարանի Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ, դասախոս պ. գ. դ., պրոֆեսոր Հայրապետ Մարգարյանը:

Տերեկույթի ընթացքում Վարդանանց խորհրդին նվիրված հոգեւոր ու հայրենասիրական երգերով եւ ասմունքով ելույթ ունեցան Գեւոր-



տին՝ անվանակոչության ուրախալի օրվա առիթով, մաղթեց Նորին Սրբությանը քաջամոռջ կյանքի բյուրավոր օրեր՝ անսասանորեն հովվելու համայն հայոց ազգը:

Հանդիսության մասնակիցներին ողջունեց նաեւ ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների եւ հասարակա-նության հետ կապերի գծով պրոռեկտոր, տ. գ. թ. Ռուբեն Մարկոսյանը:

«Վարդանանց պատերազմում սուրբ նահատակների արյան գնով ձեռք բերված բարոյական հաղթանակը մեր ազգի ինքնության խորհրդանիշն է: Այն սրբագործեց մեր ժողովրդի ազգային, կրոնական կյանքն ու բարոյական նկարագիրը: Վարդանանց տոնը, հիրավի, հայրենասիրության եւ ոգու առկայության դրսևորում է: Ոգեկոչելով, արժեւորելով մեր հերոսների սխրանքը՝ փորձում ենք այն օրինակ դարձնել Նոր սերնդի համար, որն ապրում է Նոր կյանքով, Նոր նպատակով, Նոր տեսիլքով եւ Նոր հեռանկարներով: Մեր համալսարանում եւ, վստահ եմ, Հայաստանի գրեթե բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններում, այսօր ունենք Նոր վարդաններ», - ասաց պրո Մարկոսյանը՝ հավելելով, որ ազգ-բանակ հայեցակարգի համատեքստում համալսարանների կամարներից ներքո իրականացվում են հայրենաճա-

գյան հոգեւոր ճեմարանի եւ Երեւանի պետական համալսարանի ուսանողները:

Ավարտին իր պատգամն ու օրհնությունը ներկաներին բերեց Մայր Աթոռի հոգեւոր-կրթական բարձրագույն հաստատությունների վերատեսուչ Գեւորգ եպս Մարոյանը:

Սրբազան հայրը, շնորհակալություն հայտնելով ներկաներին եւ միջոցառման աջակիցներին, նշեց, որ Երեւանի պետական համալսարանի եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի միջեւ առկա այս գեղեցիկ ավանդությունը, ձեւավորվելով իր պաշտոնավարման սկզբում, շարունակվում է առ այսօր: «Իմ խորին համոզմամբ՝ հայի քրիստոնեական ինքնությունը հիմնված է երեք պատմական իրադարձությունների վրա. դրանք են Հայոց դարձը, Գրեթե գյուտը եւ Վարդանանց հերոսամարտը:

Պատմությունը ցույց է տվել, որ սրանք շարունակվող իրադարձություններ են մեր կյանքում, եւ այս իրադարձությունների համագումարից է ծնվել ազատության, սեփական «ես»-ի համար պայքարի ոգին: Եվ մեր պարտականությունն է՝ վառ պահել այդ պայքարի ոգին մեր մեջ եւ փոխանցել հաջորդող սերունդներին», - նշեց Գեւորգ սրբազանը:

Հանդիսությունն ավարտվեց Պահպանիչ աղոթքով:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԳԻՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՄԻՈ ՊԱՏՐԻԱՐԻՔԻՆ

Փետրվարի 11-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մերձմոսկովյան Ռամենսկի շրջանում «Սարատովյան ավիանոդներ»-ին պատկանող ինքնաթիռի կործանման կապակցությամբ ցավակցագիր է հղել Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կրիլ Ա Պատրիարքին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գերագույն հոգեւոր խորհրդի, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հոգեւոր դասի եւ հավատացելոց անունից վշտակցություն է հայտնել Ռուս Ուղղափառ Եկեղեցու Հովվապետին, Ռուսաստանի ժողովրդին, ավիավթարի հետեւանքով զոհվածների ընտանիքներին ու հարազատներին: «Հայցում ենք երկնավոր մեր Տիրոջը՝ Իր օթեւաններում խաղաղության մեջ հանգչեցնել զոհվածների հոգիները եւ Սուրբ Հոգու մխիթարություն շնորհել նրանց բարեկամներին», - նշել է Նորին Սրբությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթել է, որ Աստված խաղաղ եւ անվրդով պահի եւ պահպանի Ռուսաստանի Դաշնությունը եւ նրա աստվածասեր ժողովրդին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ԿԻՊՐՈՍԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ՝ ՎԵՐԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորագիր է հղել Կիպրոսի Հանրապետության Նախագահ Նիկոս Անաստասիադիսին՝ նախագահի պաշտոնում վերընտրվելու առիթով:

«Ուրախ ենք, որ Կիպրոսի բարեպաշտ ժողովուրդը, բարձր գնահատելով Ձեր կարողություններն ու հարուստ փորձառությունը, պետությունը ղեկավարելու պատասխանատու առաքելությունն առաջիկա տարիներին դարձյալ վստահել է Ձեզ:

Մեր ժողովուրդը մեծապես կարելորդ է Հայաստանի եւ Կիպրոսի բարեկամական կապերի առավել ամրապնդումը եւ տարբեր ոլորտներում երկկողմանի համագործակցության զորացումը, որին մեծ նպաստ է բերում նաեւ կիպրահայ համայնքը: Մեր մաղթանքն է, որ առաջիկա տարիներին եւս մեր երկրների հարաբերությունները շարունակեն արդյունավորվել՝ բարօրություն բերելով մեր երկու եղբայրական ժողովուրդներին», - ասված է Վեհափառ Հայրապետի շնորհավորագրում:

Նորին Սրբությունը հայցել է երկնավորից՝ օրհնելու, պահպանելու Կիպրոսի Հանրապետությունը եւ Կիպրոսի աստվածասեր ժողովրդին, Տիրոջ զորակցությունը մաղթել տիար Նիկոս Անաստասիադիսին՝ իր բարձր եւ պատասխանատու առաքելության մեջ:

ՆՈՐ ՆԵԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների Նոր նշանակումներ:

Նշան քին. Ավաբերդյանը, ազատվելով Արարատյան հայրապետական թեմում ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի հայոց թեմում:

2017 թ. դեկտեմբերի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ձեռնադրված վեց քահանաները եւս, ավարտելով քառասունյա պատրաստության շրջանը, իրենց հոգեւոր սպասավորությունը կբերեն տարբեր թեմերում:

Սերովբե քին. Պատվականյանը ծառայության է կոչվել Արցախի թեմում, Մխիթար քին. Ահարոնյանը՝ Արագածոտնի թեմում, Հրանտ քին. Մանուկյանը՝ Կանադայի հայոց թեմում, Նժդեհ քին. Զեյնյանը՝ Բուլղարիայի հայոց թեմում, Զերովբե քին. Բարսեղյանը՝ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում, Կիրակոս քին. Սիմոնյանը՝ Վրացիայից թեմում:

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին Նշեց 40-օրյա մանուկ Հիսուսի՝ տաճարին ընծայման տոնը, որի սկիզբն ազդարարվեց փետրվարի 13-ի երեկոյան: Այս առիթով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եկեղեցականների հանդիսավոր թափորով իջավ Մայր տաճար, ուր Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Երեկոյան ժամերգություն:



Ժամերգությանը հաջորդեց նախատոնակը, ապա տեղի ունեցավ տարվա առաջին Անդաստանի կարգը, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ հոգեւոր դասի կողմից օրհնվեցին աշխարհի չորս կողմերը, հայրենիքն ու ժողովուրդը: Այնուհետեւ «Քրիստոս փառաց» տաղի ներքո Մայր տաճարի Իջման սբ Սեդակի կանթեղից Ամենայն Հայոց Կաթողիկոսը վառեց Քրիստոսին խորհրդանշող մոմը՝ կենսատու լույս:

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱԾԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ա. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

սը փոխանցելով ներկա հավատավոր ժողովրդին: Արարողության ավարտին թափորը՝ ժողովրդի ուղեկցությամբ, ուղղվեց դեպի Մայր տաճարի շրջաբակ, ուր Գարեգին Բ Հայրապետի ձե-

ր քարոզում հայր սուրբը, անդրադառնալով օրվա խորհրդին, ներկայացրեց մանուկ Հիսուսին ընդառաջ դուրս եկած Սիմեոն ծերունու կերպարը: «...Արդարությունը կերակուր չէ,

թե ինչպիսին ենք պարտավոր լինել: Ինչո՞ւ հանճարեղ եղավ Սիմեոն ծերունին. որովհետեւ առաջին վայրկյանից նրա ամբողջ կյանքի իմաստն էր լինել արդարության ջահակիր, աստվածային իմաստության

զգացումով: Որքա՞ն են մաքուր ձեր ձեռքերը, հոգիներն ու մտքերը: Որքա՞ն եք կարողացել ձեր մեջ քրիստոնեական արդարությունն ապրեցնել: Որքա՞ն եք կարողացել ինչ-որ տեղ իրականացնել «Ես սուրբ եմ, դուք էլ սուրբ պիտի լինեք» աստվածային հրամանը: Ահա այստեղ է, որ արժեւորվում է իրապես Տյառնընդառաջի տոնակատարությունը... Տերը կծագի այնտեղ, որտեղ քո ճշմարիտ հավատքն է, որտեղ քո մաքրությունն ու ազնվությունն են,



ռամբ վառվեց Տյառնընդառաջի խարույկը: Այս առիթով Գեւորգյան հոգեւոր ճեմարանի երգչախումբը հանդես եկավ հոգեւոր եւ ազգային երգերի կատարումներով: Փետրվարի 14-ին Նշվեց բուն Տյառնընդառաջի տոնը: Տերունական տոնի կապակցությամբ միաձնաեշ Մայր տաճարում մատուցվեց սբ Պատարագ: Պատարագիցն էր Մայր Աթոռի Ս. Էջմիածնի միաբան Կոմիտաս վրդ. Հովնանյանը:

որ ճաշակես, արդարությունը հոգեւոր արժեք է, որ պիտի կարողանաս արժեւորել Եւթյանո՞ւ մեջ այնպես, ինչպես Սուրբ Գիրքն է ասում, թե՛ Աստծո նման արդար եղեք, որովհետեւ Տերը սուրբ է: Տեսնո՞ւմ եք, սիրելիներ՛, Տյառնընդառաջն այլ իմաստ ունի մեզ համար, որովհետեւ յուրաքանչյուր երեւոյթի հիշատակությունը գալիս է մեզ համար ապրելակերպի դաս լինելու, որպեսզի մենք հասկանանք,

ջահակիր»,- ասաց հայր Կոմիտասը: Հայր սուրբը հորդորեց ներկաներին նմանվել Սիմեոն ծերունուն: «Կատարյալ հավատացյալը պետք է լինի իմաստուն, հանճարեղ, զորություն ունեցող, գիտության եւ աստվածաշնչության ռահվիրա: Ահա սա է Տյառնընդառաջի գաղափարը, սա է, որ գալիս է մեզ դաս տալու, որովհետեւ բոլորդ այսօր մի Սիմեոն ծերունի եք, եկե՛ք ընդառաջ մեր Տիրոջը, բայց ի՞նչ հոգով եւ ի՞նչ

որովհետեւ այդտեղ է ապրում Աստված», - ընդգծեց հայր սուրբը: Վերջում պատարագիցն ամենքին մաղթեց, որ սիրով լինեն միմյանց նկատմամբ, որովհետեւ ուր սեր է, այնտեղ Աստծո օրհնությունն է: Հավարտ Պատարագի, հանդիսապետությամբ Մուշեղ եպս Բաբայանի, կատարվեց Նորապսակ զույգերի օրհնության կարգ, որին մասնակցեցին նաեւ Նորապսակ միաբան սարկավազները:

Սույն թվականի հունվարի 30-ից փետրվարի 4-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում իր հերթական՝ 15-րդ հանդիպումն անցկացրեց Արեւելյան Ուղղափառ եւ Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ աստվածաբանական երկխոսության միջազգային միացյալ հանձնախումբը: Տարբեր երկրներից ժամանած շուրջ 30 մասնակիցները քննարկեցին եկեղեցաբանությանն առնչվող մի քանի հարցեր՝ կենտրոնանալով հիմնականում ապաշխարության, ձեռնադրության եւ իրվանդաց օծման խորհուրդների վրա: Հաստատված ժամանակացույցի համաձայն՝ քննարկումները ծավալվեցին 18 լիագումար նիստի շրջանակներում:

Արեւելյան Ուղղափառ եւ Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ աստվածաբանական երկխոսության միջազգային միացյալ հանձնախմբի 15-րդ հանդիպումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

ցուցիչներ, Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ: Միջեկեղեցական աղոթքի ընթացքում՝ սաղմոսերգությունից եւ սուրբգրային ընթերցումներից հետո, արարողության մասնակիցներին իր պատգամն ուղղեց Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

տարբեր փորձառությունների՝ մեր երկու եկեղեցական ընտանիքների միջեւ առկա դավանական, մշակութային եւ աշխարհընկալման տարբերությունների՝ մենք բոլորս մեկ Աստծո զավակ ենք, եղբայրներ եւ քույրեր՝ միավորված Աստծո սիրով: Եվ հենց այս բազմազանության մեջ սիրո միությունն է մեր՝ Աստծո զավակ լինելու վավերական վկայությունը: Քրիստոսով սիրո եւ եղբայրության մեջ տեղ չունեն անհանդուրժողությունն ու անհամերաշխությունը, որոնք այսօր էլ շարունակում են փորձության մեջ պահել մարդկային հասարակությունը՝ միջկրոնական հակառակությամբ, պատերազմներով ու ահաբեկչություններով, նաեւ անտարբերության ամենատարբեր դրսեւորումների, որոնք սկիզբ են առնում անարդարությունից եւ հասարակական անհանդուրժողականությունից, անկայունությունից եւ հակամարտություններից, որոնք էլ իրենց հերթին ստեղծում են ատելություն ձևով հոգեւոր ամայություն: Մենք ամենքս՝ իբրեւ Քրիստոսի խորհրդական մարմնի անդամներ, կոչված ենք անձանձիր կերպով միաբանություն ու սեր սերմանելու՝ տարածելով աստվածային խաղաղությունը: Ցեղասպանություն վերապրած մեր ժողովրդի պատմության ամեն էջ գրվել է նահատակության ու հավատի վկայության հաղթանակների արյամբ: Հետեւաբար, լավ գիտենք արժեքը սիրո, եղբայրության, ժողովուրդների բարեկամության, խաղաղ ու ապահով կյանքի: Եվ սրտակից ենք մեր եղբայրների ու քույրերի տառապանքներին, քանզի ս. Պողոս առաքյալի խոսքով՝ «թվով շատ, մի մարմին ենք Քրիստոսով, բայց յուրաքանչյուրս մի սյանց անդամ ենք» (Հռոմ. ԺԲ 5): Սիրելի՛ եղբայրներ եւ քույրեր,

Մենք գոհություն եւ փառք ենք տալիս Աստծուն, որ ներկա դարաշրջանում քրիստոնյաները գիտակցում եւ խոր ըմբռնումով են ընկալում քրիստոնեական եղբայրության եւ փոխադարձ սիրո աստվածատուր պատվիրանը. «Ձեզ կարգեցի, որ դուք զնաք եւ պտղաբեր լինեք, եւ ձեր պտուղը մնա... Այս եմ պատվիրում ձեզ, որ սիրեք միմյանց» (Հովհ. ԺԵ 16-17):

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եղբայրական սիրո իր ողջույսներն ու բարեմաղթանքները հղեց Արեւելյան Ուղղափառ քույր Եկեղեցիների հոգեւոր պետերին եւ Հռոմի Սրբազան Ըսահանայապետ Ֆրանցիսկո Պապին՝ աղոթելով, որ Աստված նրանց շնորհի քաջառողջություն եւ կենաց արեւշատ օրեր: Այնուհետեւ շարականների երգե-



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ միջեկեղեցական աղոթք

Փետրվարի 4-ին միաձնաեշ Մայր տաճարում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ միջեկեղեցական աղոթք՝ Արեւելյան Ուղղափառ եւ Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ աստվածաբանական երկխոսության միջազգային միացյալ հանձնախմբի՝ Ս. Էջմիածնում գումարված նիստի առիթով:

Միջեկեղեցական աղոթքին մասնակցում էին տարբեր երկրներից ժամանած Ղապի Ուղղափառ, Ասորի Ուղղափառ, Սիրիայի Մալանկարա Ուղղափառ, Եթովպիայի Ուղղափառ, Կաթոլիկ եւ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիների ներկայա-

Ողջունելով եղբայրական աղոթքի համար Մայր Աթոռում մեկտեղված Կաթոլիկ եւ Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների միջեւ երկխոսության միջազգային համատեղ հանձնախմբի աշխատանքը, որն իր գործունեությունն սկսել է 2003 թվականից եւ այժմ իր հերթական՝ տասնհինգերորդ հանդիպումը գումարել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Անցած տարիներին դուք քննարկեցիք մեր երկու եկեղեցական ընտանիքների եկեղեցաբանական-խորհրդական կյանքի ընդհանրություններն ու տարբերությունները՝ մշտապես շեշտելով աստվածաբանական երկխոսության միջոցով անցյալի բաժանումները դարմանելու անհրաժեշտությունը: Հակառակ պատմական



Միմյանց հանդեպ անշահախնդիր սիրո ու փոխօգնության միջոցով է, որ քրիստոնյաներն այս աշխարհում իրականություն կարող են դարձնել երկնավոր Կարողապետի պատվիրանը, միմյանց համար աղոթքով ու համագործակցությամբ է, որ պտղաբեր լինենք, ու մեր պտուղը՝ իբրեւ անուշահոտ ընծա, ընդունելի կլինի Աստծուն: Այսօրվա եղբայրական մեր մեկտեղումը լավագույն առիթ է եւս մեկ անգամ մեր հոգում վերանորոգելու Տեր Հիսուս Քրիստոսի պատգամը: Մենք կոչված ենք մշակելու Տիրոջից մեզ հանձնված այգին, որտեղ համագործակցությունն է ապահովում արգասաբերություն եւ պտղաբերություն:

Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ բաղձալի փոխըմբռնման հիմքը աստվածախնամ սերն է, եւ հայցեց, որ Տերը զորացնի իր Սուրբ Եկեղեցին եւ պարգեւի ամենքին ճանաչելու սիրո եւ միության ճշմարիտ ոգին:

ցողությունից հետո աղոթք բարձրացրեցին Համիետտի, Բարնաբե, Զաֆր էլ Շեյքի միտրոպոլիտ Գերաշ-Նորի Անբա Բիշոյը (Ղապի Ուղղափառ Եկեղեցի) եւ Քրիստոնեական միության քահանայապետական խորհրդի նախագահ Նորին Սրբազնությունն կարդինալ Կուրտ Կոխը (Կաթոլիկ Եկեղեցի):

Միջեկեղեցական արարողությունը եզրափակվեց Գարեգին Բ Հայրապետի Պապականիչ աղոթքով: Միջազգային միացյալ հանձնախմբում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ներկայացնում էին ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե Ժ. վրդ. Անանյանը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսությունից՝ Մա-կար եպս Ալեքսանյանն ու Պողոս վրդ. Թինկյանը:

Սկզբը՝ էջ 2

Խոսելով հայ ժողովրդի կյանքում անմոռանալի մնացած Ղեւոնդյանց քաջության եւ սիրագործության մասին՝ տեր Սիմեոն ասաց. «Ուղիղ հարյուր տարի առաջ բանաստեղծի խոսքերով՝ Ավարայրից ջանք առած մեր նախնիները գրեցին հայ ժողովրդի պատմության հերոսական էջերից մեկը՝ մայիսյան հերոսամարտերը: Ավարայրից ու Սարդարապատից ջանք առած մեր հայրերն ու ավագ եղբայրներն ազատագրեցին նաեւ Արցախը

կյանքի եւ միայն այդպես արժանի լինելու Ղեւոնդյանց հետնորդները լինելու բարձր ու երանելի պատվին՝ պարզ ճակատով կանգնելով Տիրոջ ատյանի առջեւ»:

Պատարագիչը հորդորեց իր հոգեւոր եղբայրներին ապրել եւ գործել ս. Ղեւոնդյանց ուղենշած ճա-



աշխարհը: Իսկ այսօր ամեն իրաւ եւ ամեն վայրկյան անդադար չա-յոց սահմաններին կանգնած զինվորի, սպայի ու զնդերեցի հոգիներում թեւածում է Ավարայրի, Սարդարապատի ոգին: Ղեւոնդյանց ու Վարդանանց սրբերի հոգիներում բորբոքված սիրո հուրն այսօր էլ արթուն է պահում ամենքիս ու դարձնում անպարտելի...»:

Պատարագիչ քահանան անդարձարձակ նաեւ ազգային ինքնությանն ու հավատքին սպառնացող արդի մարտահրավերներին. «Նյութապաշտության, անտարբերության, անարդարության չաստվածները երբեմն սիրելի են դառնում մեր որոշ քույրերի եւ եղբայրների համար: Այսօր մեր հայրենիքի սահմաններին հասած կրոնական կասկածելի հոսանքները, ազատության մասին խեղճած մեկնաբանությունները, հեռուստաթերից ու տարբեր խողովակներով քարոզվող քրիստոնեական ընտանիքի մասին աղավաղված պատկերացումները, օտարոտի ենթամշակույթների ու կեղծ արվեստի քարոզչությունը շատ չեն տարբերվում եւ երբեմն ավելի վտանգավոր են հին հազկերտներից ու նրա զորքից: Ահա այդ մարտահրավերների առջեւ է, որ դարձյալ Նորոյոյ դեւոնդներն ու վարդաններն են կանգնած՝ Ավետարանի լույսով լուսավորելու մեր ժողովրդին, մեր նախնիաց սուրբ պատգամներով զորացնելու հավատքն ու նվիրումը երիտասարդ մեր զավակների, կենդանի աղը դառնալու հոգեւոր

նապարհով ու սիրանքով, ապագա սերունդներին համար հարթել քաջության, զոհաբերության, սիրո ու նվիրումի նորանոր ուղիներ:

Վերջում Սիմեոն քահանան Հայոց Եկեղեցու քահանայից դասի ա-



նունից տոնի առիթով շնորհավորեց Հայոց Հովվապետին՝ հայցելով ս. Ղեւոնդյանց բարեխոսությունը յուրաքանչյուր հայ հոգեւորականի ուխտյալ ծառայության համար:

Ս. Պատարագից հետո տեղի ունեցավ քահանաների շնորհաբաշխման արարողություն:

Միասնական՝ Տերունական ազդեցից հետո բացման խոսքով հանդես եկավ Ընթացի թեմի առաջնորդ Միքայել Եպս Աջապահյանը: Տոնի առիթով շնորհավորելով Նորին Սրբությանը եւ Հայ Եկեղեցու ողջ հոգեւոր դասին՝ սրբազան հայ-

րը նշեց, որ Ս. Ղեւոնդյանց տոնը քահանայական ծառայության արժեւորման, պանծացման եւ փառաբանության օր է: Սրբազանը նաեւ մաղթեց, որ կորովը, ներշնչանքն ու աստվածային շնորհներն անպակաս լինեն քահանայական դասից:

Մինչ պարգեւաբաշխությունը «Դավիդյան» հիմնադրամի նախագահ եւ բարերար տիար Ասո Դավիդյանը քահանայից դասին տեղեկություններ փոխանցեց Հայոց Եկեղեցու գործառնությունների բարելավման ծրագրի վերաբերյալ: Տիար Ասո Դավիդյանը ներկայացրեց այս առնչությամբ կատարված աշխատանքները, պատասխանեց հոգեւորականների հարցերին:

Այնուհետեւ տեղի ունեցավ շնորհաբաշխությունը: Վեհափառ Հայրապետը մի շարք եկեղեցականների շնորհեց քահանայական լաւնշախաչեր: Լաւնշախաչ կրելու իրավունքի արժանացան Սեւակ քին, Սարիբեկյանը (Մայր Աթոռ Ս. Էջմիածին), Չարեհ քին, Աշուրյանը (Արարատյան հայրապետական թեմ), Պարգեւ քին, Պալգեւորգյանը (Արարատյան հայրապետական թեմ), Ղուկաս քին, Բալայանը (Արարատյան հայրապետական

Նորին Սրբությունը նշեց, որ Հայոց Եկեղեցին մեկ ու կես հազարամյակ նշում է այս տոնը՝ կարեւորելով այն արժեքները, որոնք մատուցվում են մեր ժողովրդին: Վեհափառ Հայրապետը դրանց շարքում մասնավորապէս առանձնացրեց առ մեր Տեր Հիսուս Քրիստոս անձնագոյի նվիրումը, որն իրենց նահատակությամբ վկայեցին ս. Ղեւոնդյանք:

Անդրադառնալով մեր օրերում եկեղեցականների ծառայությանը եւ



դարեր շարունակ ապրել ու հարատեւել է հայ ժողովուրդը, փորձ է արվում շփոթեցնել եւ շեղել նրան դարերով դավանած ճշմարիտ հավատքից եւ արժեքներից:

Հայոց Հայրապետը նշեց, որ այսօրվա եկեղեցականության սրբազան եւ նվիրական պարտականությունն է շարունակել հայրերի արթուն սպասավորությունը: Այս կապակցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց թեմակալ առաջնորդներին եւ քահանայից դասին՝ ջանադիր աշխատանքի համար՝ հայցելով Տիրոջ զորակցությունը եւ Սուրբ Հոգու շնորհները ամենքին՝ առավել պայծառացնելու Քրիստոսի Սուրբ Եկեղեցին եւ նրա զավակներին համախումբ պահելու Եկեղեցու կամարների ներքո: Փարեզին Բ Վեհափառը պատգամեց ժողովրդի հոգում միշտ սերմանել հավատի հունդերը, որպէսզի դրանք առատ պտղաբերեն հայրենաշէն եւ եկեղեցանկեր գործերով:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն արդիւթեց, որ Աստված Իր Աջը հովանի դարձնի հայրենի երկրին ու ժողովրդին եւ Իր օրհնությամբ ու առատ շնորհներով զորացնի եկեղեցականներին՝ փառքով կատարելու իրենց ծառայությունը՝ հավատավոր ժողովրդի հոգեւոր կյանքի շինության համար:



Նահապետ Բուշակ. սիրո մեծ երգիչը

Սկզբը՝ 2017-ի թիվ 19-20, 22, 2018-ի թիվ 1-2

Թեւեւ Զուլալը ստեղծել է գիշերային բազմապիսի պատկերներ, բայց դրանց հանդէպ ունի իր յուրահատուկ վերաբերմունքն ու նախասիրությունը: Նա սիրում է քայլել «քիչ մի լուրջ, քիչ մի գիտով»՝ գինու գավը ձեռքին բռնած: Այդպիսի մի երջանիկ գիշեր նա դուրս է գալիս, թե «եարուկ մի զըտնում սիրելու» եւ հանդիպում է «զըրօղին»: Վերջինս սպառնում է, թե «զհոգեկո ունիմ տանելու», իսկ քնարական հերոսը խորհուրդ է տալիս «անհաւատ գրօղին» տանել այն մարդու հոգին, որի ձեռքին գինի կա, բայց ո՛չ խմում է, ո՛չ հյուրասիրում, որը «զաղուրդ ի գրկին ունի», «ո՛չ գրկե, ո՛չ տայ գրկելու» (Էջ 142): Այսպիսին է Զուլալը՝ սիրում է կյանք, կին ու գինի: Նրա համար գիշերը սիրով արթնալու ժամն է: Լուսնկա գիշերը նույնիսկ երա-

զում հայտնված յարը պատճառ է դառնում, որ սիրահարն արթնա սիրուց ու գովերգի գեղեցկությունը:

Գիշերերգերում հազար ձեւով է ծավալվում սիրո փառաբանման, պատճառած երջանկության ու կարոտագին որոնումների մեղեդին: Սիրո կարոտը խառնվում է աստղերին ու լուսնին, «մութ ու լուսնկայ» գիշերներին, քաղաքից քաղաք տանող սիրո ճամփաներին, որոնց հանձնված կարելի է հասնել «կիւզելին»:

Գիշերս ես ի դուրս ելայ. մութ գիշեր, չկայ լուսունկայ. Բըռնամ այս բարակ ճամբեկս ու երթամ մինչ որ լուսնայ, Շատ գեղ շատ քաղաք անցայ, այս գեղիս դէմքն կապեցայ. Թող չէն ու բոլոր մընայ, թե ի՞նչ աղէկ կօզալ կու կենայ Էջ 287

Ո՞վ ունի այսպիսի գիշերներ: Գուցե

միայն շատ ուշ եկած բանաստեղծները՝ Հովհաննէս Թումանյան, Միսաք Մեծաբենց, Ավետիք Իսահակյան, Վահան Տերյան, որոնցից ամեն մեկն ունի իր զարմանալի գիշերը, ուր ծավալվում ու ծաղկում են սպասման երազները: Չափազանց ինքնատիպ են Զուլալի գիշերները. նախ ունեն հարազատ մթնոլորտ, ընդհանուր գծեր, միեւնոյն ժամանակ նրանցից ամեն մեկը մի աշխարհ է:

Զուլալյան գիշերերգերը կարծես վկայում են, որ սերն անմար մի ջահ է, որը լուսավորում է ոչ միայն խավարն ու մթությունը, այլ նաեւ մարդու հոգին: Մեծ սիրերգակն այս ամենն արտահայտել է՝ կերտելով բազմազան ու բազմապիսի պատկերներ, եւ իր սիրո տաղերը երգել է այնպէս, ինչպէս որ զգացել է՝ պարզ բառերով ու մտածողությամբ, առանց որեւէ արհեստականության:

Շարունակությունը՝ էջ 8

Սկզբը՝ թիվ 1-2

Տիրոջ հոգին ինձ վրա է, դրա համար իսկ Նա օժեց ինձ, ուղարկեց ինձ՝ ավետարանելու աղքատներին, բժշկելու սրտով բեկվածներին, գերիներին ազատություն քարոզելու եւ կույրերին՝ տեսողություն...

Եսայու մարգարեությունը,
61-ի 1, 2, 3

Ռուսինահայ գաղութի կազմավորման համար մեծ նշանակություն ունեցավ 1931 թ. Ռուսինական Թագավորության Մինիստրների խորհրդի որոշումը, որտեղ պրոֆ. Նիկոլայ Յորգայի օգնությամբ հաստատվեց Հայ Առաքելական Եկեղեցու (այդ ժամանակ՝ «Հայ Գրիգորյան Եկեղեցի») թեմը պաշտոնապես ճանաչելու եւ տեղի լուսավորչական հայերի հոգեւոր կենտրոնը Եպիսկոպոսական Աթոռն ընդունելու որոշումը: Ըստ փաստաթղթի՝ թեմը բաղկացած էր Ռուսինայի տարբեր շրջաններում գտնվող 22 հայկական համայնքներից: Արքայական հատուկ հրովարտակով, ինչպես նաեւ Գեւորգ Ե Ամենայն Հայոց Հայրապետի կողմից հատուկ կոնդակով, Հուսիկ արք. Չոհրապյանը պաշտոնապես հաստատվում է որպես ռուսինահայ թեմի առաջնորդ (Շտիկյան Ս., Վազգեն Առաջին Կաթողիկոս Ամենայն Հայոց. Համառոտ տարեգրություն (1908-1955), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1986 թ., էջ 31):

Ի վերջո, տարիներ անց, թեմի բաղձալի ցանկությունը կատարված էր. այն ուներ իր հոգեւոր հովիվը, սակայն թեմը միավորելու դժվարություններն ու խոչընդոտները հաղթահարելու համար շատ մեծ ջանքեր էին պահանջվում: Ցիրուցան հոտը համախմբված տեսնելու հույսով՝ դեռեւս 1895 թ. Պետրոս քին. Մամիկոնյանը դիմել էր Ամենայն Հայոց Հայրապետ Խրիմյան Հայրիկին՝ ռուսինահայ գաղթօջախի դրությունը նկարագրելով. «Անիրաժեշտ պետք մ'է այս կողմերու գաղթականաց համար առաջնորդ մը կարգել, որպէսզի Ռուսինիոյ քաղաքներն շրջելով յաջորդաբար, հարկ եղած կարգադրութիւնքն ինք անձամբ կատարէ. իսկէ ժողովրդեան եւ հոգեւոր պաշտոնեից վրայ. բառնայ գեղծումներն, արգիլէ օտարամուտ նորածնութիւնքն, եւ որպէս իւր պաշտօնն հոգեւոր է, ազդու քարոզութեամբք, հոգեւոր խրատներով, բարոյական միջոցներ խորհելով՝ անպատշաճ վարմանց առաջն առնու» (Մամիկոնեան Պ., Ռուսինահայոց ներկայն եւ ապագայն, Կալաթ, 1895, էջ 190-191):

Որոշ ժամանակ անց թեմի առաջնորդ է կարգվում Հուսիկ արք. Չոհրապյանը: Ծանոթանալով թեմում տիրող անմիաբան, պառակտված վիճակին՝ սրբազանը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե Սուրենյանցին հղում է նամակ, որտեղ պատմում է թեմի ներքին անառողջ մթնոլորտի, անսանձ ու անկիրթ քահանաների մասին եւ խնդրում ուղարկել իր իրավասությունների ու լիազորությունների շրջանակն ամրագրող կոնդակ՝ թեմը կառավարելու համար: Իր նամակում նա գրում է, որ թեմի քահանաների մեծագույն մասն անհամապատասխան են իրենց կոչմանը, չունեն կրթություն, տեւական ժամանակ չունենալով հոգեւոր հովիվ՝ չեն ենթարկվում որեւէ մեկին:

Նույնիսկ կաթողիկոսական կոնդակի պարագայում, հասկանալի էր, որ առկա խնդիրները միանգամից չէին լուծվելու:

Թեմի եկեղեցիների վատ վիճակի նկարագրությունները շարունակվում են Հուսիկ արք. Չոհրապյանի կողմից: Հատուկ նամակով նա կաթողիկոսին պատմում է Սուչավայի եւ Բոկոփնայի եկեղեցիների ծանր դրության մասին, այնուհետեւ գրում, որ թեմը որեւէ եկամուտ չունի հոգալու թեմի եւ առաջնորդարանի ամենատարրական ծախսերն անգամ, չկան նույնիսկ բավականաչափ ուսյալ հոգեւոր գաղափարակիրներ: Նրան հարկավոր էին նվիրյալ, բանիմաց ու կրթված աշակիցներ: Այս պայմաններում Հուսիկ սրբազանի համար մեծ հայտնագործություն էր երիտասարդ ուսուցիչ Կարապետ Պալճյանը:

ԼԵՎՈՆ-ԿԱՐԱՊԵՏ ՊԱԼՃՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽՈՒՄ Նվիրվում է Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի ծննդյան 110-ամյակին

Սրբազանի հարուստ գրադարանը դեպի իրեն էր ձգում երիտասարդին: Նա ինքնամոռացումի ժամեր էր անցկացնում այնտեղ: Սրբազան հայրն օգնում ու ուղորդում էր գրքեր ընտրելու հարցում՝ Լեւոն-Կարապետի մեջ սերմանելով հոգեւորականի բարձր ու առաքինի կոչման նկատմամբ վերաբերմունք՝ ուշադրությունը հրավիրելով հատկապես հայ ժողովր-



դի եւ Եկեղեցու պատմության, աստվածաբանության, իրավունքի մասին եղած գրականության վրա:

Հուսիկ սրբազանի մտերմությունը երիտասարդ Պալճյանի հետ մեծ նշանակություն ունեցավ գաղութի ապագան հուսալի ձեռքերում տեսնելու հարցում:

1942-ին՝ Հուսիկ արք. Չոհրապյանի մահվանից հետո, մեծ ջանքերով կազմավորված թեմում իրավիճակը բարդանում է: Պատերազմական դրության պատճառով ընդհատվել էր կապը Մայր Աթոռի հետ, արտասահմանյան թեմերից էլ նոր առաջնորդ ակնկալելն անհնար էր: Հերթական անգամ ներքին պառակտումներից խուսափելու համար՝ տեղի թեմական խորհրդին մնում էր ինքնուրույն ելք գտնել իրադրությունից: Թեմի առաջնորդը պետք է կուսակրոն հոգեւորական լիներ, տիրապետեր թե՛ մայրենի լեզվին, թե՛ ռուսներենին, տեղի իշխանության հետ շփվել կարողանար: Դժվար էր գտնել տեղական ուժերից նման չափանիշներին համապատասխանող հարմար թեկնածու: Կարապետ Պալճյանի թեկնածությունն առաջարկում է Հակոբ Սիրունին: Վարժարանի երիտասարդ ուսուցչի հարցում թեմական խորհրդի բոլոր անդամները համակարծիք էին: Մնում էր նրա կողմից հոգեւորական դառնալու համաձայնություն ստանալ:

Անկեղծորեն խոստովանելով՝ Վեհափառը հիշում է, որ սկզբնական շրջանում հոգեւորական դառնալու միտքը ոչ իրեն, ոչ էլ, մանավանդ, մորը չի հրապուրել: Ավելին՝ որդու՝ կուսակրոն հոգեւորական դառնալու մասին թեմական խորհրդի միաձայն ընդունած որոշմանը, իսկ հետո՝ նաեւ բացատրությամբ, թե՛ «Պարոն Կարապետն ավելի հարմարը չենք գտներ», բողոքի ընդոստ արտահայտություն է դառնում ընդդիմացող մոր շուրթերին:

Որդուց պահանջվող գոհաբերումի չափը, գուցե անանձնական երջանկությամբ անձնականը գոհաբերելու պարտադիր պահանջը ցնցում է մորը: Սակայն մարգարեացել էր որդու համար դեռ վաղ մանկության շրջանում գրած նրա խնդրանքը. «Անունս է Լեւոնիկ, Բոլորած իմ վեց տարիք, Մաղթեցէ՛ք դուք ի սրտե՛ք՝

Աստուած գիս անփորձ պահէ, Որ ես ըլլամ քաջ, արի, Չիսուոր Մայր Հայաստանի» (Գօլանճեան Ս., Երջանկայիշատակ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա-ի կեանքն ու գործը, հանգիստը եւ յուղարկավորութիւնը, Լոս Անճըլէս, 1996 թ., էջ 9):

Անշուշտ, Սիրանուշ Պալճյանը նույնիսկ մտածել չէր կարող, որ 1915 թ. հունիսին վեցամյա Կարապետի լուսանկարի շրջերեսին թողած իր գրությունը մի օր կյանքի է կոչվելու՝ գրածի բուն նշանակությամբ:

Երբ թուրքական յաթաղանը սրախողխող էր անում մի ողջ ժողովուրդ, երբ օրհասի ու բնաջնջման վտանգի սարսափազդու բաց աչքերի մեջ այլընտրանք չունեցողի անօգնական հայացքով նայում էր պաշտպանի ու զինվորի կարիքով, հոգածու ձեռքին կարոտ Մայր Հայաստանը, Տիրոջը լսելի եւ ընդունելի է դառնում հեռավոր Բուխարեստում ծնված, վեցամյա թոթովախոս փոքրիկի մոր խնդրանքով, տարիներ անց նրա զավակի մեջ փնտրելու եւ հանուր ժողովրդի համար գտնելու կորցրած սիրո ու հավատի վերադարձը՝ իր ժողովրդին խոստացող Չիկվորին՝ Քրիստոսի բանակի այն ջախակրի միջոցով, ով հետագայում Աստվածորդու չարչարաններին այդքան հաղորդ ազգի Հոգեւոր Առաջնորդն էր լինելու:

Գիտակցելով, որ ընտրությունն ի վերուստ էր կայացել, մայր եւ որդի խոնարհումով ընդունում են աստվածահաս պատգամը: Վեհափառը հիշում է. «Երեւակայեցեք վեց ամիս տեւեց, այսպես ասեւք, այդ խոսակցությունները, ինձ վրա բարոյական ճնշում գործադրվեց, թե՛ ազգի շահերի համար պետք է իմ համաձայնությունը... Վերջ ի վերջո համակերպվեցի եւ ընդունեցի հոգեւորական դառնալու այդ առաջարկությունը» (Պապիկյան Հ., Գալստյան Չ., Ոգեղեն կյանք (Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի ծննդյան 90-ամյակին), Էջմիածին, 1998, էջ 13):

Համաշխարհային երկրորդ պատերազմի ամենալարված շրջանում Բուխարեստի Ս. Հրեշտակապետը եկեղեցու ավագ երեց Իզնատիոս քին. Զիլիմյանի հետ 1943 թ., զարմանալի զուգահեռությամբ, ճիշտ իր ծննդյան օրը՝ սեպտեմբերի 20-

ին, Կ. Պալճյանն ուղեւորվում է Աթենք, ուր Կարապետ եպս Մազլումյանի ձեռամբ սեպտեմբերի 30-ին Տուրղուդ-Ֆիքսի թաղի Հայոց Ս. Կարապետ եկեղեցու մեջ ձեռնադրվում է վարդապետ՝ վերանվանվելով Վազգեն՝ առաջարկությամբ ռուսինահայ թեմի խորհրդի անդամ, կնքահայր Ռուբեն Իսրայելյանի՝ ի հիշատակ հայդուկապետ Վազգեն Տերունյանի:

Հոկտեմբերի 4-ին Ռուսինիա վերադարձող գնացքը հրաշքով է փրկվում ռմբակոծությունից. րոպեներ առաջ նույն ուղղությամբ անցած գնացքից բեկորներ էին մնացել. «Երթուղարձի ամբողջ տեւողութեան եւ զգացի, թէ աներեւոյթ ձեռք մը գիս կ'առաջնորդէր եւ հանգրուան առ հանգրուան դռները մեր դիմաց կը բանար», - հիշում է Վեհափառը (նույն տեղում, էջ 13):



Իսկապես, նրան դեռ շատ երկար անցնելիք ճանապարհներ էին նախանշվել՝ փորձություններով ու դժվարություններով, բայց նաեւ՝ լեցուն Տիրոջ օրհնությամբ եւ Նրա ամենագոր «աներեւոյթ ձեռքի» պահպանիչ գործությամբ:

Շարունակելի

Լուսինե ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մանկավարժական գիտ. թեկնածու

«Արարող ձեռքեր» ճախագծի առաջին ցուցահանդես

Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ 2018 թ. հռչակվել է Երիտասարդության տարի: Այս առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանները 2018 թ. ողջ ընթացքում իրականացնելու են «Արարող ձեռքեր» խորագրով ցուցահանդեսային նախագիծը:

Նախաձեռնության նպատակն է աջակցել Հայաստանի եւ Սփյուռքի երիտասարդ արվեստագետներին՝ հանրության առջեւ հանդես գալու, ներկայացնելու իրենց ստեղծագործությունները, մտորումները եւ գալիքի իրենց տեսլականը:

Ցուցահանդեսներն ընդգրկելու են կերպարվեստի բոլոր ճյուղերը (գեղանկար, քանդակ, լուսանկար են):

Նախագծի շրջանակներում առաջին ցուցահանդեսի բացումը տեղի ունեցավ փետրվարի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի առաջին հարկի սրահում: Ցուցահանդեսին ներկայացվել էին Միքայել Հարությունյանի եւ Սարգիս Բաբայանի ստեղծագործությունները:

Լրատվական նյութերը՝
ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՕՐՀՈՒՐԹՅԱՆԻ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ.
ԱՄԵՆԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒԿՈՍՈՍ

ՍԱՐԳԻՍ ԲԱԲԱՅԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ՀԱՐՈՒՆՅԱՆ

ՑՈՒՑԱՆԿԱՆԴԵՍ

Փետրվարի 11, 2018 թ. Ժամը՝ 15:00

Վայր՝ Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Կաթողիկոսի հոգևոր ճեմարան

Սկզբը՝ էջ 6

❖❖❖

Նահապետ Զուգակի ստեղծագործության մեծ մասը սիրո երգեր են, սակայն նրա հայրենների շարքում իրենց ուրույն տեղն ունեն նաեւ պանդխտության թեմային առնչվող երգերը:

Դարեր շարունակ հայ ժողովուրդը ենթարկվել է բռնագաղթերի ու արտագաղթերի, տեսել պատերազմներ, սով ու բազում արհաւիրքների հետեւանքով քայքայված հայրենիք, ինչն էլ դարձել է պանդխտության՝ ապրուստի միջոցները օտարի հողում փնտրելու պատճառ:

Բնական է, որ այս թեմային շատ հեղինակների պես անդրադարձել է եւ Զուգակը: Որոշ գրականագետներ հայտնել են այն կարծիքը, թե Զուգակի պանդխտության հայրենները նույն սիրային երգերն են, որոնք, սակայն, բխում են պանդխտական հանգամանքներից:

Նահապետ Զուգակի՝ պանդխտության թեմային վերաբերող գրեթե բոլոր հայրենները օտար երկիր գնացող կամ արդեն իսկ այնտեղ գտնվող սիրահարի ու նրան սպասող սիրած կնոջ զգացմունքների արտահայտություններն են: Այստեղ եւս քուչակյան հերոսուհին դրսևորում է իր եռությունը, արձագանքում իրեն վիճակված դժվարություններին, արտահայտում իր ապրումները: Ծանր է բաժանումը սիրող զույգի համար: Քնարական հերոսը գիտի, որ պետք է մեկնի օտար երկիր: Նրա համար կյանքը կորցնում է իր իմաստը, քանի որ յաբից հեռու պիտի ապրի: Նա չի կարողանում հասկանալ, թե ինչու ինքը պիտի լքի իր «աղուորին», որի սիրով խոցվել է, եւ որի գեղեցկությունն իր համար է ստեղծված:

*Աղուոր, իմ հազար աղուոր,
դըրախտին բեհեշտի խնծոր,
Շախրե եղեգին մեջեն ես
քաշած՝ քան զլատիֆդ աղուոր.
Չունեղդ ես աղեղ արել ու
զաչերդ ուղոջ նետաւոր.
Ատով խոցեցիր դու գիս,
ես դարի՛ս եմ, երթամ ընդ ո՞ր:*

Էջ 220

Բաժանվելու գիտակցման պահից սկսվում է հոգեկան դրաման: Զրաժեշտ տվող սիրահարն իր յարին «ամանաթ» է թողնում հարազատներին, որպեսզի «ի վարդին մեջն պահեն»: Դառն է նրա վիճակը. չգիտի՝ կենդանի կվերադառնա, թե՞ ոչ: Զերոսը պայման է կապում՝ եթե բարով վերադառնա, «զամանաթս ի տերն հասուցեք», իսկ եթե պանդխտության մեջ մահանա, յարին փայայեն, իրեն էլ՝ հիշեն. «վարդըն ձեզ՝ ըզտերն յիշեցեք» (էջ 340): Մինչդեռ այլ պատվեր է տալիս յարին. խնդրում է, որ իր ճանապարհն օրինի, հավատարմությամբ սպասի ու աղոթի վերադարձի համար, իսկ եթե ինքը չվերադառնա, երբեք ուրիշի սերը չվայելի:

*...Տարեկ մի օֆա պահե,
գերեսիկդ ի մարդոյ ծածկե:
Թե՛ գամ նա տուա արա, թե՛
չըզամ նա դու սեւ ներկե.
Հազար՝ ամանաթ, հո՛գի, յետեւ
ինձ ըզտերն թարկե՛:*

Էջ 341

Սիրահարը գիտի, թե ինչքան դժվար է լինելու իր համար սիրուհուց հեռու գտնվելը: Կարոտը մաշելու է հոգին, ու նա ցանկանում է յարի մազերից մի փունջ հետը տանել օտար երկիր, որ նրա փոխարեն մազերը փայլալայի:

*...Զաղէ՛ փունջ մ՝ ինձ տուր
նըշան, ես օտար երկիր կու
գընամ.
Քանի դուն իմ միտքս անկնիս,
երեսիս դընեմ քեզ փոխան:*

Էջ 341

Պանդխտությանը դեմ է նաեւ սիրող կինը: Նա գիշեր ու ցերեկ լալիս է, «չի դադրիր աչերն ի լալու», խնդրում յարին չհեռանալ, «բռնում եւ արգելում» է, սակայն անհնար է վերջինիս որոշումը փոխել. «Գնալու եմ, չեմ կենալու»: «Աղուորը» զգուշացնում է, որ ինչքան էլ հեռանա, «օր մի տի յիմ ափս անկնիս», այդժամ ինքը կփակի նրա բոլոր անցնելիք կամուրջներն ու ճամփաները, որ նա չկարողանա այլեւս հեռանալ: Սակայն ինչքան էլ բողոքի, վերջին պահին նա իր քնքուշ սրտի մաղթանքն է անում.

*...«Ուր երթաս՝ բարով կենաս,
ես լալով գիմ կեանքս անցուցի»:*

Էջ 205

Յարի մեկնելուց հետո «կօզալի» համար սկսվում են տառապանքով լեցուն օրեր: Նրա «ելած հոգին» շարունակ յարից «խապար» է սպասում, եւ ով այդ լուրը բերի. «Հաշուե՛ գիմ ելած հոգին դարձուցեր՝ Լ ինձի կու բերե»: Զոգեմաշ անող կարոտը օրեր շարունակ արցունք է հոսեցնում հերոսուհու աչքերից, եւ այնքան «ողորմուկ» է այդ լացը, որ արցունքները վերածվում են արյան:

Նահապետ Զուգակ. սիրո մեծ երգիչը

*Գիշեր ու ցերեկ կուլամ, աճափ
իմ եարըն կու լըսէ՛.
Անչափ ողորմուկ կուլամ՝
աչերուս արիւն կու կաթե...*

Էջ 212

Դժվար է կնոջ համար, երբ սիրելին հեռվում է: Նրան ոչ միայն տանջում է սիրո կարոտը, այլ նաեւ մտածմունքները յարի մասին: Նա Աստծուց խնդրում է, որ իրեն տա «զաղավնու թեւ», որպեսզի թռչի իր սիրահարի մոտ, իսկ ավելի հաճախ աղոթում ու պաղատում է, որ «Ստեղծողը» պահապան լինի բոլոր «ղարիպների»: Ինքը եւս «ղարիպ» ունի եւ տանջվում է նրա համար, անհամբեր սպասում վերադարձին, քանզի «հոգին կու ելնե»...

*Կանչեմ հոտ ի վեր, Ստեղծող,
զամենայն դարիս դու պահե՛.
Իմ եարն ի դարիպուհուն, իր
կըրա՛կըն գիս կու երե.
Չիր գալն ինձ շուտով արե՛՛ գիմ
ամեն տերտըս նա գիտե...*

Էջ 340

Սպասող աղվորի համար «տերտըս» մեղմելու, սփոփելու միջոց են դառնում նամակները, որոնց մեջ նա արտահայտում է իր ապրումներն ու հույզերը, թեթեւացնում վիշտը: Նրա սիրտը դարձել է «շալամ», նա մշտապես «բարիքի թղթիկներ» է գրում յարին, որոնք լի են կարոտած պազերով, պատգամով, թե սիրած յարին չմոռանաս, սիրո հառաչանքներով ու սպասման խոսքերով:

*...Թղթիկ մըն յետեւեն զնաց որ
ամենն էր հառաչ ու լաց.
Իր մեջն էր պազեր գըրած,
ի յեզերն՝ գիրկ, կարօտ ու լաց:*

Էջ 223

Սիրող ու տանջվող սիրտն իր վերքերն ապաքինելու համար դիմում է բնության օգնությանը: Ամենակարող բնությունը սիրահարի հույզերի թարգմանն է, զգացմունքների պաշտպանն ու հառաչանքների մշտական ունկնդիրը:

Բնությունն ինքն էլ է ցավում, երբ բաժանվում են սիրահարները.

*Իմ եարն ի յիսնե՛ գընաց, լեռ ու
ծոր հաւսար հետըն լաց.
Երկինք ու գետինք թոնդաց,
աստղունաց մեկ մըն չըմաց:*

Էջ 230

Բնությունը մշտապես հետեւում է սիրահարներին, նրանց սիրուց փթթում, տառապանքից

թոշնում, ասես տեղյակ է նրանց յուրաքանչյուր քայլից: Այդ է պատճառը, որ յարին «կորուսած աղուորը» դիմում է սար ու ձորին, քար ու թփին՝ նրա տեղն իմանալու համար:

*Ա՛յ սարեր, ա՛յ ձորեր,
գիտացե՛ք, եար եմ կորուսել:
Ա՛յ քարեր, ա՛յ թղփեր, աճապ ի
ձեզ չե՛՞ եկել.
Ա՛յ քարե կարմընջնի, ի ձեզ չե՛՞
անցել.*

*Չիս ի քուն թողել ելեր
գընացեր:
Էջ 238*

Երբեմն էլ միմյանցից հեռու գտնվող սիրահարների համար բնության չքնաղ երեւույթներից մեկը՝ շրջագայող ու բոլորին տեսնող լուսինը, դառնում է հաղորդակցման միջոց: «Կօզալը» հարցնում է «բարձրագուշա լուսնին», թե՛ «չի տեսա՞ր գիմ յար Մշեցին», եւ իմանում, որ յարն իրեն շատ բարեւ է ուղարկել: Մինչդեռ կինը գանգատվում է նրանից, որ չի վերադառնում, ինքը՝ արցունքն աչքերին, նրա գալուն է սպասում:

Զրեմա՛՛ Լ իմ եարուն ասա՛՛ թե՛՛



*Զընա՛՛ Լ իմ եարուն ասա՛՛ թե՛՛
նըստեր երդիքն ու կուլայ,
Կուլայ՛՛ ողորմուկ կուլայ,
աչերուն արիւն կու ցողայ:*

Էջ 286

Թվում է՝ ժամանակն ու տարածությունը սիրո այն թշնամիներից են, որ դառնում են դրա կործանման պատճառը: Իրականում, սակայն, ժամանակի ու տարածության պատճառով չի մարում սիրո կրակը, այլ այն իր մշտաբորբ ջերմությունն է հաղորդում կարոտյալներին: Սերը դառնում է մի «փարոս», որը ետ է կանչում հեռվում գտնվող սիրահարին: Ի՞նչը կարող է ավելի ցանկալի լինել սպասող կնոջ համար, քան սիրելի կողքին գտնվելը, որը եւ խաղաղություն կբերի իր հոգուն. «Չերեսս երեսին դընեմ, որ հոգիս ի ծոցն ելանե» (էջ 340): Անսկարագրելի հուզիչ են «աղուորի» ապրումները, երբ նրան հայտնում են յարի վերադարձի մասին:

*Եկին ու խապար բերին,
թե՛՛ ելեր քո եարն ու կուզայ,
Եկե՛ք, մենք ի դեմ երթանք,
որ նորա սիրտըն չիմնայ.
Պազենք գիր կարմիր երեսն,
որ աշխարհս չէ ի գին նորա.
Առնունք գիր ոտից փոշին,
որ աչերս քաշենք թուփայ:*

Էջ 176

Այսպիսին է պանդուխտ յար ունեցող միջնադարյան «կօզալը»: Նա իր զգացմունքների ջերմ պաշտպանն է, իր յարի հավիտենական սիրուհին ու նրան հավիտենական երջանկություն պարգևողը:

❖❖❖

Աշխարհում շատ են կին ու սերերգող բանաստեղծները, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է զգացել սերն ու ինքնօրինակ արտահայտել իր զգացածը: Նրանցից յուրաքանչյուրի հետ իր երգերով կարող է մրցել Նահապետ Զուգակը: Սիրո մեծ երգիչը ինքնատիպ է ու անմիջական թե՛ իր զգացմունքների խորությամբ, թե՛ արտահայտության եղանակներով: Նրա հայրենները ընթերցողի առջեւ բացում են արտակարգ նուրբ, ինքնատիպ հույզերի ու ապրումների, երագանքների ու հուսախաբության, մեծ ու անկաշառ սիրո մի աշխարհ: Բանաստեղծի համար սերը սրտեր հուզող ու այրող անմար մի կրակ է, որն արտահայտելու համար նա գտնում է բազմազան ու բազմապիսի պատկերներ, բարձր կատարելության ու ինքնատիպության հասցնում հատկապես կնոջ նկարագրությունը: Այդ պատկերները կերտված են ճոխ ու շռայլ գույներով, բազմաթիվ համեմատություններով, մակդիրներով ու պատկերավորման այլ միջոցներով: Հաճախ բանաս-

նական է համարում մարդկանց միջեւ գոյություն ունեցող դասակարգային անհավասարությունը:

Հայրեններում կինը պատկերված է տարբեր հանգամանքներում, տարբեր հոգեվիճակների մեջ: Երբեմն նա սիրո նախաձեռնողն է. հաճախ ենք նրա բերանից լսում համարձակ ասված սիրո խոսքեր: Գեղեցկուհին մե՛րթ իրեն հարգել պարտադրող անառիկ փերի է, մե՛րթ սիրեցյալի հոգու հետ խաղացող, սեթեւեթող կին, երբեմն էլ՝ իր զգացմունքների ջերմ պաշտպանը:

Հատկապես քուչակյան գիշերերգերում շատ լավ է երեւում միջնադարյան նահապետական բարքերն արհամարհող կինը: Գիշերային խավարը սիրո երգերում ոչ թե թաքցնում, այլ ավելի տեսանելի է դարձնում կնոջ համարձակ, նախաձեռնող լինելը: Այստեղ եւս դրսևորվում է կանացի խորհրդավոր եության բացահայտման քուչակյան վարպետությունը: Դրամատիկ իրավիճակներով հարուստ են Զուգակի պանդխտություններով, մակդիրներով ու պատկերավորման այլ միջոցներով: Հաճախ բանաս-

Զուգակի հոգին, հուզիչ ապրումներն ու սպասումները: Զուգակյան բանաստեղծական աշխարհը չափազանց լայն է, խորունկ ու ընդգրկուն: Այստեղ զարմանալիորեն միաձուլվ են իրականն ու անիրականը, կինն ու կյանքը, բնությունն ու գեղեցկությունը, սերն ու բանաստեղծը: Միասնական այս աշխարհի հիմքում ընկած են սերն ու կյանքը, իսկ տիրուհին կինն է, որի սիրո բալասանող ու ամենակարող ուժին հավատում է բանաստեղծը: Զուգակյան հայրենները սիրելի ու թանկ դարձնողը հոգու այն տրոփն է, որ դեռ հինգ դար առաջ արտացոլել է սիրերգակը: Ժամանակի ընթացքում նրա պոեզիան ավելի մոտ ու հասկանալի է դառնում ընթերցողներին, հուզում սրտեր ու մտքեր: Զուգակի հարուստ միտքն ու գեղեցիկ լեզուն ստեղծել են այնպիսի գեղարվեստական գոհարներ, որոնք հայ եւ համաշխարհային գրականության հարուստ գանձարանի շքեղ զարդերից են: Որպես ճշմարիտ բանաստեղծ ու մտածող՝ առեղծվածային Զուգակը դեռ երկար կապրի ու կդառնա լուրջ հետաքրքրության եւ ուսումնասիրության առարկա:

Վարդան ԵՂԻԱԶՄՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

Զուգակի հոգին, հուզիչ ապրումներն ու սպասումները:

ԵՐԻՍՏՈՆՅԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Երիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 19.02.2018թ..

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ